նման փռփռացնելով, տաում է պարագլուխը: Նա սկսել է, մի ջանգիւլում եւ ամէն անգամ երգում է մի սիւն, ամբողջ խորը կրկնում էր նրա խօսքերը:

Իսկ երբեմն երգում են հերթով: Այն ժամանակ մրցութիւն է լինում տղամարդերի եւ աղջիկների մէջ: Նրանք պատասխանում են միմեանց զանազան սրախօսութիւններով:

Պարի եղանակը կամ ձեւը պահպանւում էր ոտքերի զանազան տեսակ շարժուածքներով: Երբեմն շղթայի բոլորակ շարքը ստանում է ոլոր-մոլոր ձեւ, այն ժամանակ կազմւում է մի կատարեալ լաբիրինթոս: Բայց երբեք խաղացողները չեն խառնւում միմեանց:

— Կուզե՞ս մենք էլ պար բռնենք, — հարցրի Մարօից:

— Չէ՛, գնանք ուրիշ բաներ մտիկ անելու, — պատասխանեց նա:

Պատառելով խառնուած ամբոխը, մենք անցանք վանքի գաւիթը. այստեղ հանդիսանում էր մի այլ տեսարան:

Մարօն սարսափեցաւ:

Այստեղ բազմութիւնը շրջապատել էր մի նորահարս կնոջ, որ ուշաթափ եղած, մոլեգնաբար թաւալւում էր գետնի վրայ: Նրա բերանը փրփրում էր, աչքերը վառւում էին վայրենի կրակով. մարմնի անդամները դողդողում էին, եւ կատաղի կերպարանքը ցոյց էր տալիս, որպէս թէ նա տանջւում է մի աներեւոյթ զօրութիւնից: Նա երբեմն իր դողդոջուն շրթունքի միջից արձակում էր խուլ, մթին եւ անկապ խօսքեր:

Նրան կոչում էին «ընկաւոր»:

Մի վարդապետ փոքրիկ խաչը ձեռին կանգնած էր «ընկաւորիէ մօտ: Նրա մօրուքի եւ շրթունքի ցնցողութիւնից երեւում էր, թէ աբեղան աղօթում է:

«Ընկաւորը» կրկին ուշաթափ եղաւ, մտաւորապէս յափշտակուելով մի վերին ազդեցութիւնից: Քանի րոպէ նա մնաց անշարժ: Եւ ապա սկսեց արձակել խորին հառաչանքներ, արտասանել կցկտուր բառեր եւ կոչել հրեշտակների, դեւերի, սատանաների, սուրբերի անուններ:

Վարդապետը դրեց «ընկաւորի» բերնում փոքրիկ խաչը: Նա ագահ ախորժակով խաչը ներս է կլանում: Քանի րոպէից յետոյ վարդապետը ձգում է շղթայից, որին կապուած էր փոքրիկ խաչը եւ դուրս է քաշում:

«Ընկաւորը» փոքր-ինչ սթափւում է: Բայց տակաւին նրա երեսը զարհուրելի է եւ աչքերն արտայայտում են սարսափելի վրդովմունք: